ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԽԴՐԱՎՈՐ ԵՎ ՆԱԽԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱ

Գրաբարում զանազան խնդրային և պարագայական լրացումներ ձևավորելու համար հոլովական ձևերի բացի լայնորեն գործածում էին նախդրավոր և նախդրությամբ կառույցներ: Բայի և ածականի լրացում ձևավորելուց դուրս, այդ կառույցները գոյականի լրացման դերում հաճախադեպ են գործածվում որպես որոշակի պակցման և իմաստային արտահայտության բազմազանություն:

Հայ քերականագիտության մեջ տարբեր առիթներով չնայած շատ են անդրադարձել նախդրավոր նախդրությամբ կառույցով լրացման և գոյական լրացյալի կապակցություններին, սակայն դրանց կառուցվածքային-իմաստային մի շարք իրողություններ կարոտ են համակողմանի հետազոտման: Դրանցում հետաքրքրություն են ներկայացնում ինչպես լրացյալ գոյականի, այնպես էլ լրացումը ձևավորող նախդրի նախդրության իմաստային, ծագումնաբանական և բառակազմական հատկանիշները:

Գրաբարում այս կառույցները հիմնականում դրվում են բայանուն գոյականների վրա[1] կապվելով դրա մի արտահայտվող բայանվան իմաստների հետ: Մյուս դեպքում այդ կառույցները գոյականի լրացում են դառնում նրա ածականական ծագման հիմքով, որքանով որակական ածականները ևս խնդրառու են, և նրանց հետևում է նաև նախդրով ու նախդրությամբ և սրանց խնդիրներով ձևավորված կառույցներով լրացում ստանալը: Սակավաթիվ կապակցություններում կառույցը գոյականի վրա դրվում է՝ նրանց միջև եղած դերբայի գործակցությամբ, որին էլ լրացնում է այն: Եվ, ի վերջո, խիստ հազվադեպ հանդիսանում են նախդրավոր նախդրությամբ կառույցով լրացման և բուն գոյական լրացյալի կապակցություններ:

Նկատված է, որ գոյականի լրացման դերում ավելի ակտիվ են նախդրավոր կառույցները: «Այս հանգամանքը թերևս բացատրվում է նրանով, որ նախդրություններն ավելի մոտ են մակբայներին»[2] և հետևաբար, դրանք հիմնականում ձևավորվում են բայի լրացումներ: Գրաբարում գոյական լրացյալին իրենց խնդիրներով լրացում են դառնում ավելի հաճախ *առ, առ ի, ընդ, ի* նախդիրները, նախդրություններից ակտիվ են *առաջի, ընդդեմ, յաղագս, ի ծեռն, ի մէջ, ի վերայ, վասն, քան* և այլն:

Նախդրավոր և նախդրությամբ կառույցով լրացում ստացող բայանուն կամ ածականական սերումով գոյականների թիվը մեծ է: Դրանցից ավելի հաճախադեպ գործածություն ունեն հետևյալները.

1. արմատական բայանուն գոյականներ՝ *ահ, բողոք, գործ, դատ, դարձ, երթ, լուծ, խրատ, կռիւ, հաւատ, հրաման, մարտ, նախանձ, ողբ, պատգամ, պատերազմ, պարգեւ, սէր, սուգ, վաճառ, ուխտ, վախճան, ցաւ* և այլն:

2. նախանցավոր բայանուն գոյականներ՝ ամբաստանութիւն, *ամուսնութիւն, այցելութիւն, բարկութիւն, գոհութիւն, գժտութիւն, գրգռութիւն, թագաւորութիւն, թշնամութիւն, յանդիմանութիւն, յաղթութիւն, յարձակումն, ծանօթութիւն, յաշտութիւն, վրէժխնդրութիւն, պարտութիւն, առաքումն, գրգռումն, երդումն, յարձակումն, գլուխտ, կորուստ, փախուստ, անարգանք, արշաւանք, պարծանք, տրփանք, նախատինք, խորհուրդ, անէծք, դօրք, խնդրուածք, խօսք* և այլն:

3. ածականական սերումով գոյականներ՝ *ահաւորութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն, առաւելութիւն, ատելութիւն, արդարութիւն, բարեխօսութիւն, զգուշութիւն, խռովութիւն, յայտնութիւն, մասնակցութիւն, միամտութիւն, միբանութիւն, նենգութիւն, չարութիւն, չկամութիւն, քաջութիւն* և այլն:

Լրացյալի դերում հանդես եկող այս գոյականների շարքերն ուշադիր դիտելիս կարելի է անել այսպիսի հետևություններ՝

ա)Բոլոր բառերի մեջ խիստ ընդգծված են բայականությունն ու որակական ածականի հատկությունները, որոնք ինքնին հուշում են դրանց կապակցելիական առաջնային արտահայտությունները: Նախդրավոր և նախդրությամբ կառույցով լրացման և գոյական լրացյալի միջև գոյություն ունի այն հարաբերությունը, ինչ կա նախդրությամբ կառույցով լրացման և գոյական լրացյալին սերումով հարաբերակից բայի կամ ածականի միջև (հմմտ.՝ պատերազմ ընդ Արտաշիսի, պատերազմել ընդ Արտաշիսի):

բ)Կապակցելիական այդ ուղղվածությունն են ենթադրում բառակազմական հատկանիշները (*միաբանութիւն, մասնակցութիւն, մերձաւորութիւն, բարեխօսութիւն* և այլն), այսինքն՝ լրացման ձևը պայմանավորվում է կազմությամբ բաղադրյալ լրացյալի բաղադրիչներից մեկի իմաստային պահանջով, ինչպես՝ *մասնակցութիւն ընդ արդարսն* (ԳՆՄՈ, 335,ԻԴ):

գ)Գոյականակերտ ածանցներից ակտիվ են *-ութիւն, -ումն, -անք, -ք,* չնայած գոյականի կապակցելիական պահպանմամբ բայանուններ ու ածականական սերումով գոյականներ և այլն:

Նախդրավոր և նախդրությամբ կառույցով լրացման և գոյական լրացյալի բառակապակցությունները ինքնատիպ են և՛ գործառության նկատառումներով: Այդ կաղապարները գործածվում են և՛ նախադասության մեջ, և՛ նրանից դուրս՝ անվանական-վերագրային կազմություններում: Ընդ որում՝ վերջին դեպքում դրանք հանդես են բերում որոշակի առանձնահատկություններ: Նախ՝ հանդես են գալիս ամբողջությամբ, ինչպես՝

Երևանդայ *պատերազմ ընդ Արտաշիսի* եւ փախուստ, եւ առաքումն քաղաքի նորին եւ մահ(ՄԽ, 170, ԽՁ): *Յարձակումն* Ալանաց *ի մեզ* եւ *պատումն* եւ *խնամութիւն* Արտաշիսի *ընդ նոսա* (ն.տ,177,Ō), ապա՝ լրացյալը զեղչված, օրինակ՝

Յաղագս Յոհաննու *եպիսկոպոսի և վարուց* նորա և ագահության սորա և անմտութեան (Բուզ.,398): Վասն Սանատրկոյ թագաւորութեանն, եւ սպանման ծննդոցն Աբգարու, եւ *վասն* Հեղինայ տիկնոջ (ՄԽ., 159,ԼԵ):

Իսկ առանձին դեպքերում զեղչվում է նույնիսկ նախդրության խնդիրը, որն արտահայտվում է ստորադաս նախադասությամբ, ինչպես՝

Յաղագս... թէ որպէս՝ ի նախանձ մտեալ տապալեաց թագաւորն Պապ զամենայն զեղեալսն կրօնս կանոնիցն...(ն.տ.,340,ԼԱ):

Հարկ է նշել նաև, որ նախադասության մեջ գոյականի լրացման դերում այդ կառույցներն առաջացնում են խնդրային և պարագայական հարաբերություններ՝ կերտելով միայն որոշչի պաշտոն:

Բայանուն և ածականական սերումով գոյականներն ավելի հաճախ ստանում են հանգման, վերաբերության, փոխադարձ կապի, սահմանափակման, տեղի, պատճառի, ժամանակի և մի քանի այլ իմաստների լրացումներ՝ արտահայտված նախդրավոր և նախդրությամբ կառույցներով:

Հատկանշական է մի առանձնահատկություն ևս՝ նախդիրները և նախդրությունները գոյականի լրացում ձևավորելիս բացառապես հանդես են գալիս իրենց հիմնական, առաջնային իմաստային արտահայտություններով: Օրինակ՝

Առ (+տրական, +հայցական), *ընդ* (+տրական, +հայցական, +գործիական), *ի* (+տրական, +հայցական) նախդիրների, *ի* վերայ (+սեռական) նախդրության և սրանց խնդիրների կազմավորած կառույցների և գոյականի կապակցությամբ արտահայտվում է հանգման հարաբերություն: Լրացյալը բայանուն գոյական է հետևյալ օրինակներում:

· Դուք էիք մեր պարծանս առ թշնամին ճշմարտութեան, արդ դուք էք մեր <u>նախատինք առ նոյն թշնամիս</u> (Եղ., 54):...*որ պատմին...տրփանք* Սաթինկան *ընդ Վիշապազունսն*՝ առասպելաբար, այս ինքն *ընդ զարմս* Աժդահակայ (ՄԽ, 176, ԽԹ):

Լրացյալը կարող է լինել ածականական ծագմամբ գոյական, որի խնդիրն արտահայտվում է *առ + հայցական, մերձաւորական, ընդ + տրական, ի վերայ + սեռական* կառույցներով: Օրինակ՝...և երանի է մեզ վասն սորա *

«Գիր ամբաստանութեան Մօրկայ *առ Խօսրով վասն իշխանացն* և զօրացն Հայաստանի» (Սեբ.,Զ) նախա
դասության ընդգծված կապակցության մեջ *առ Խոսրով* կառույցն ունի ուղղության- հաղորդման իմաստ, *վա*
իշխանացն և զօրացն կառույցը վերաբերության: Այդպես է նաև հետևյալ օրինակներում՝

...զի՞նչ մեր *բանս առ Աստուծոյ յաղագս ի ծէնք* վտանգիցս, որոց վտանգք և աղքատութիւն սեպիակա
է(ՄԽ,248,ՂԲ): Կալ *յաղօթս առ տէր վասն մանկան* (ՀՆԿ,Ա.,Թագ.,Ա 27):

Հանդիպում են նաև այլ իմաստների լրացումներով կապակցություններ, ինչպես՝

... Դարձյալ յարձակումն Խոսրովու *ի վերայ Արտաշրի առանց* Յունայեցւոց *օգնականութեան* (ՄԽ, 9
ՀԳ): ...յարձակեին *ընդդէմ նորա* նախատանօք *առ ի մահ* ըստ սադրելոյ Հագարացւոյն (ՅԴՊՀ, 234,ՕՀ):

Այսպիսի կապակցություններում լրացումները սովորաբար լինում են խնդրային բնույթի (ինչպես է բերվա
օրինակներում), բայց հանդիպում են բառակապակցություններ, որոնցում լրացումներից մեկը լրացյալի
կապվում է պարագայական նշանակությամբ:

Տալ *պատերազմ ընդ Իսրայելի յանապատին*,(ՀՆԿ, Թիւք, 23):

Նկատելի է, որ բայանուն կամ ածականական ծագմամբ գոյականին կարող են լրացնել մեկից ավել
նախդրավոր կամ նախդրությամբ կառույցներ՝ համադասությամբ: Այսպիսի դեպքերում նախդիրը, նախդրո
թյունը կա՛մ կրկնվում են, օրինակ՝

Ապա թէ ոչ տեսանես դու զիս, խնդրես *պատերազմ ի մէջ իմ* եւ *ի, մէջ քո* (Բուզ.,249,ՕԲ:)...*ի մէջ կայսերն*
ի մէջ իւրեանց *զուխտն* հաւանութեան և խաղաղութեան նորոգեսցեն(և.տ.,123,Ե): Եվ դարձեալ ասէ թէ ոչ
մեզ *մարտ ընդ մարմնոյ* և ընդ սրեան(ԵՁՆ.,126,ԻԲ):

Կա՛մ դրվում է միայն մեկը, որը վերաբերում է սակայն երկու խնդիրներին՝

Ուխտեաց Դավիդայէ ուխտ *ի մէջ իւր և արքային* (ՀՆԿ,Կ,Դ.թագ., ՇԱ, 17): եւ անդէն թագաւորն հրամայէ
գրել հրովարտակ. և ոչ եւս ըստ սովորութեանն, *այլ բանս* զայրագինս իբր *առ ատելիս* և *անպիտանս*...(Եղ.,4

Սրանց հետ չպետք է շփոթել բայանուն գոյականի բազմարժույթ արտահայտության դեպքերը, երբ մեկի
ավելի լրացումները ծավալում են նրա տարբեր իմաստները: Պատահում է, որ նախդրով կամ նախդրո
թյամբ կառույցն իր լրացյալից ընդմիջվում է նախադասության այլ անդամներով, սովորաբար լրացյալի՝ ե
թակայական սեռականով լրացմամբ(հմմտ. *Գժտութիւն ընդ Հերովդի Արշամայ*, և ակամայ հնազանդութի
(ՄԽ, 141, ԻԵ): *Պատերազմ Շապհոյ ընդ Կոստանդեայ*... (և.տ., 270, ԺԲ): Առանձին կապակցություններու
նախդրավոր կամ նախդրությամբ կառույցը դրվում է զեղչված, բայց գիտակցվող դերբայի պահանջով: Լրաց
ման և լրացյալի միջև դերբայի գիտակցմամբ դրվող լրացումը կարող է ունենալ իմաստային տարբեր արտա
հայտություններ:Դա երբեմն պայմանավորվում է լրացյալի բառային իմաստով: Այսպես՝ *ճանապարհ* բառ
նշանակության մեջ կա նաև ուղղության իմաստ, և նախդրավոր կառույցը դրա հիմքով էլ կապակցվում է ա
գոյականի հետ: *Ճանապարհ ի Բագրաւանդ* ընդ որ երթայ (Բուզ.,140,ԻԴ):

Իրանիշ գոյական լրացյալը, որ իր նշանակության մեջ չունի տեղի լրացուցիչ նրբիմաստ, ստանում
նախդրավոր կառույցով լրացում ներկայության (որևէ տեղում գտնվելու) իմաստով: Օրինակ՝

....զի էին իբրև զաստեղս երկնից, եւ *զաւազ առ ափն* ծովու (Բուզ.,30, Լ): ...և պէտք եղեալ ըմպելոյ ջուր
մատուցեալ փորեաց *զաւազան ի կղզւոջ*, և բխեաց աղբիւր(և.տ., 79,ՀԱ): Աշակերտ եղեալ էր սա մեծին Գր
գորի, այլ հոգաբարձու ամենայն *եկեղեցացն* Հայոց մեծաց *ընդ ամենայն տեղիս* (և.տ., 56, ԺԴ):

Այլ կապակցություններում, որտեղ լրացյալ գոյականներից են *թուղթ, հրաման, հրովարտակ* և այլն, ա
տահայտվում է հիմնականում մատուցման հարաբերություն: Օրինակ՝

Ապա գտանէր *հրովարտակ* թագաւորն Յունաց Վաղէս *առ արքայն* Պարսից (Բուզ., 88, ԻԱ): *Բան առ Հ*
զարացիսն ըստ իւրեանց աղխատրոյզ բառին պատմի (ՅԴՊՀ,, 95): Քազի ցուցանէին զթուղթսն զոր տուեա
էր Վասակայ ... *թուղթ* մի *ի Վրաց աշխարհէն*, և *թուղթ* մի *յԱղուանից աշխարհէն* ...(Եղ., 134):

Գրաբարում նման կապակցություններն ավելի շատ կշռույթային են անվանական-վերնագրային կազմ
թյուններում, ինչպես նաև՝ չափածո խոսքում, որ դրան նպաստում են բանաստեղծական խոսքի ռիթմն ու հա
գավորումը: Այսպես՝ *Թուղթ* Աբգարու *առ Փրկիչն* (ՄԽ,2, ԼԱ): *Թուղթ* Վաղարշակայ արքայի Հայոց առ Մեծ
Արշակ արքայ Պարսից Մ Խ, 29,թ: Դարձեալ վերստին աշխարհ կրկին եղկելոյս, Քանզի գայ հասանէ առ հա
հասակիս անհնարին բարկութեամբ *Մանգաղն առ Հունձս, դատաւորն առ ատեանն* (ԳՆՄՈ,404,ԼԸ):

Կան դեպքեր, երբ լրացումը կարող է վերագրվել և՛ գիտակցվող դերբային, և՛ բայանուն լրացյալին: Օրի
նակ՝

Լուայ *առ աղակի նոցա ի գործս որացն* (ՀՆԿ, ԵԼԲ,Գ,8):

Որոշ նախադասություններում նախդրավոր և նախդրությամբ կառույցը հավասարապես կարող է դիտվ
և՛ ստորոգյալի, և՛ բայանուն գոյականով դրված խնդրի լրացում:

Եւ եթէ գտեալ էր նորա, հանէր *եւ տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տուգանս*...(Եղ, 141): *Խօսել բանս* հա
հոյութեան *ի Մովսէս* և *յաստուած* (ՀՆԿ, Գործ.,11):

Եությամբ միանգամայն տարբեր են այն կապակցությունները, որոնք հիշեցնում են նախադասությունը՝ ս
ռանց ստորոգման ձևային արտահայտության կամ դերբայական դարձված՝ առանց դերբայի:

Ոտն- զոտամբ արկեալ, *արմունկն ի ծունգ և ծեռն ի ծնօտի* նստաւ այնպէս... (Բուզ, 135, Ե):Լէգէոն սպարա
կիր հետեւակն *վահան ի ծեռն*, սակուր զգօգւոյ, ուրջ ի ներքոյ զորմովք խորանին պատեալ պսակ է
(և.տ..,196, ԼԳ):

Հազվադեպ նախդրավոր կամ նախդրությամբ կառույցն ընկած է լինում երկու բայանուն գոյականնե
միջև և հավասարապես կարող է վերաբերել նրանցից ցանկացածին: Լրացյալը որոշակիորեն առանձնան

digitised by A.R.A.R.@

է նախադասության մեջ: Օրինակ՝ «Ու՞ր է քաղցր աչացն հանդարտութիւն,...ու՞ր զուարթ շրթանցն *ժպտումն առ* բարի *աշակերտացն հանդիպումն*» (ՄԽ,361,ԿԸ):

Գրաբարում հաճախ են հանդիպում կապակցություններ, որոնցում նախդրի կամ նախդրության խնդիրը լի-
նում է բայանուն գոյական, որը որպես լրացյալ, ունենում է իր լրացումը՝ արտահայտված նախդրավոր կամ
նախդրությամբ կառույցով:

Յաղագս *պատերազմին* Արշակայ *ընդ նախարարսն* իւր... (ՄԽ,391, ԻԹ): Յաղագս *թագաւորելոյ* Տիրանայ
յետ հօր իւրոյ՝ *ի վերայ Հայոց աշխարհին* և.տ,48,ԺԲ:

Հազվադեպ նախդրավոր ու նախդրությամբ մեկ կառույցը կարող է լրացում դառնալ մեկից ավելի լրացյալ-
ների, որոնք ունենում են նույն կամ մոտավոր իմաստ, ինչպես՝

Ի յատելութեան և *ի չկամութեան... առ թագաւորն պարսից* ... արքայն Հայոց Տիրան, մինչև անգամ վասն
կաշոյ միոջ հնուց արարեալ՝ թագոյց (Բուզ., 43,դ): Զի *խեղութիւնք և արարք* են ի նոսա (ՀՆԿ,Դ, Թագ., 14):

Երբեմն լրացյալներից մեկը կարող է լինել ավելադրություն, Օրինակ՝

.....ընդ այլ մծբնացիսն ի փոխել նորա անտի անդր՝ *ի մարտս պատերազմացն* Յունաց թագաւորացն *ընդ*
թագաւորին Պարսից(Բուզ,. 40,Ժ):....ընդ ձայնս աւետեացս *բողոք գուժիս* (ԳՆՄՈ,404,ԼԸ):

Հանդիպում են կապակցություններ, որոնցում *առանց* նախդրությունը գործածվում է *ան*-ժխտական նա-
խածանցի նշանակությամբ, ինչպես՝

Գիտութիւն անմտի *բանք առանց քննութեան* (ՀՆԿ,ՀԱ,21): *Հասք առանց փանամի* մի զանգցին..., *ծեռք ա-*
ռանց կոմիզոյ մի լուսացին...(Եղ.,51): Ճարակ լինել նոցա անշէջ հրոյն ...յանապառ յանսահման *առանց թուոյ*
և առանց չափոյ ժամանակն (Բուզ.,219,ԻԴ):

Տարածված են նաև այնպիսի կապակցություններ, որոնցում նախդրավոր և նախդրությամբ կառույցները
լրացյալին կապվում են ոչ թե անմիջական ձևով, այլ հարաբերական դերանվամբ, ինչպես՝

Արդ՝ զայսպիսի շահ օգնութեան, որ ի բարեկամութենէ լինի, տեսնելով՝ խորհեցայ ևս հաստատուն և խորա-
գույն *զսէրն որ ի միջի մերում է*, հաստատել (ՄԽ,79,ԻԸ):

Որոշակի առանձնահատկություններ են նկատվում նաև կապակցության անդամների շարադասության
հարցում: Նախդրավոր և նախդրությամբ կառույցով լրացումը սովորաբար հետադաս է լինում բայանվանը:
Սա հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ լրացյալ գոյականը թեք հոլովով է, օրինակ՝

Ուներ ևս ընդ ինքեան թուղթս լի ամբաստանութեամբ զնախարարացն(ԹԱՊՏԱ 2,Զ): Այս շարադասությունն
է պահպանվում, երբ լրացյալն ունենում է մեկից ավելի նախադաս և հետադաս լրացումներ, ընդ որում՝ նախդ-
րավոր ու նախդրությամբ կառույցը դրվում է վերջիններից հետո: Այսպես՝

Կարծեմ ոչ ինչ զանխուլ է՝ տէր իմ, ի քոյոյ յաստուածասիրութեանէդ յոյժ տրտմութիւն անպակաս *ցաւք* սր-
տից մերոց *յաղագս Հայոց* և *Վրաց* և *Աղուանից* միահամուռ քոյդ հաւատացեալ հօտից (ՅԴՊՀ,266):

Կառույցի անդամների շարադասության գործում դեր է խաղում նաև նախդրի կամ նախդրության խնդ-
րի բազմաբառ արտահայտությունը:Այսպես՝ Թողում ասել զօրինադրին ձերոց ղաղտելի *հրամանն յաղագս*
մերձենալոյ արանց ի կանայս (ՂԼ.,ԺԴ):

Սակայն հանդիպում են նաև լրացման նախադաս շարադասության օրինակներ, հատկապես չափածո
խոսքում, ինչպես՝

Առ քեզ ընտանութեան, ընդ հոգւոյդ սրբոյ *միութեան*, Քաւութեան, ազատութեան, լուսաւորութեան, Մշտն-
ջենաւոր, մաքրութեան, իսկապէս երանութեան, *Ընդ վերնայնոցն* կցորդութեանն (ԳՆՄՈ, 322ԾԲ):....թէ *ընդ*
հրեշտա՞կսն պարակցութեան, յորմէ տրոհեցայ, թէ *ընդ արդա՞ռսն մասնակցութեան*, յորոց ճեղքեցաց
(և.տ,88,ԻԴ):

Բերվ[illegible]ած փաստարկները բավականին հիմք են տալիս պնդելու, որ նախդրավոր ու նախդրությամբ կառույ-
ցով լրացման և գոյական լրացյալի կապակցությունները գրաբարի քերականական կառուցվածքի մեջ տա-
հածված են, ունեն կազմության և իմաստային արտահայտության հարուստ համակարգ և առանձին ճկունու-
թյուն են տալիս խոսքին:

Համառոտագրություններ

Բուզ.- Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թ.,1912
ԳՆՄՈ-Գ.Նարեկացի, Մատեան ողբերգութեան,Ե.,
Եղ.-Եղիշէ, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին,1867:
ՀՆԿ-Համաբարբառ հին և նոր կտակարանաց,1895:
ՂԵ-Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց, 1857:
ՄԽ- Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն հայոց:
ՅԴՊՀ- Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ պատմութիւն հայոց,1912:
Սեբ.- Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, 1913: